



ԱՐԱՆՔԱՍ ԱՐԳ. ՄԿՐՏՅԱՆ

## ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՐԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻԾԵԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՐԸ ՄԻՆՉԵՎ  
ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Բուն Հայաստանում վերջին անկախ հայկական թագավորության՝ Սյունյաց թագավորության անկումից հետո (1170 թ.)<sup>1</sup> Սյունիքը ևս գրավվում է սելջուկ-թուրքերի կողմից և անկատմելի ավերածությունների ենթարկվում: Այրվում են Բաղաբերդում պահված շուրջ 10 000 ձեռագրերը, ավերվում են Կապան ու Գորիս քաղաքները, բազմաթիվ վանքեր, գյուղեր ու ամրոցներ: Այս վիճակը տևում է մոտ քառասուն տարի: Սակայն շուտով հզորացած Վրաստանի օժանդակությամբ Զաքարյան իշխանները Հայաստանի բազմաթիվ շրջանների հետ ազատագրում են նաև Սյունիքը: «...բազում ջանիս թափեցին զաշխարհս Հայոց ի պարսից (իմա՝ սելջուկ-թուրքերից)<sup>2</sup>, և առին յԱռանայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչև ի Մծրնկերտ... առին ի 660 թուականին (1212) զՍիւնիս, զՈրոտն, զԲորոդան, զԲիւն, զԲարկուշատ»<sup>3</sup>, քիչ ավելի ուշ՝ նաև Վայոց ձոր և մյուս գավառները: Ազատագրված

Սյունիքի մեծ մասը հանձնվում է Լիպարիտ Օրբելյանին, «զի նա եղև առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն»<sup>4</sup>, որով և սկիզբ է դրվում Օրբելյանների Սյունյաց իշխանական ճյուղին:

Պատմության մեջ հիշատակվող Սյունյաց աթոռակալներից առաջինը Ստեփանոս Ֆախր Էլ Մսեհն է, որ առնչվում է Օրբելյան իշխանական տան հետ Սյունիքում:

Ստեփանոս Ֆախր Էլ Մսեհը Սյունյաց եպիսկոպոս Գրիգոր Մեղրեցու որդին էր: Հայրը՝ Գրիգոր Մեղրեցին (1148—1168<sup>5</sup>), սկզբնապես ավագ քահանա էր Մեղրի ապամում: Եղբոր՝ Սյունյաց աթոռակալ Տեր Բարսեղի մահից հետո (1143<sup>6</sup>) «...ամայացեալ էր աթոռն ի բնակչաց և ոչ գոյր տէր և կամ իշխեցող, զի հոգայր վասն եկեղեցոյս կամ վասն սուտ մնացորդաց հօտին և ի խնդիր լինել առաջնորդի»<sup>7</sup>: Գրիգորի Ծամամ անուևով կինը հորդորում է ամուսնուն գնալ Կիլիկիա, կաթողիկոսի մոտ, և ձեռնադրվել եպիսկոպոս ու նշանակվել Սյունյաց մետրոպոլիտ, «զի և որդեակս մեր լիցի որդի քահանայապետի»<sup>8</sup>: Կնոջ երկար պնդումներից հետո Տեր Գրիգորը ուղևորվում է Կիլիկիա, Գրիգոր Գ Պահլավունու մոտ (1113—1166), և նրանից եպիսկոպոս ձեռնադրվելով, վերադառնում է Սյունիք ու նստում Սյունյաց Աթո-

<sup>1</sup> Տես Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը» Երևան, 1966 թ., էջ 63:

<sup>2</sup> Տես նաև Ստ. Օրբելյան, «Սյունիքի պատմություն», թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Արրահամյանի, Երևան, 1986 թ., էջ 511: Այսուհետև՝ Սյունիքի պատմություն:

<sup>3</sup> «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861 թ., էջ 287: Այսուհետև՝ Ստ. Օրբելյան:

<sup>4</sup> Նույն տեղը, էջ 291:

<sup>5</sup> Սյունիքի պատմություն, էջ 492:

<sup>6</sup> Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 20:

<sup>7</sup> Ստ. Օրբելյան, էջ 250:

<sup>8</sup> Նույն տեղը:

նին: Սրա գործունեության մասին որոշակի ոչինչ չի պահպանվել: Մահացել է 1168 թվականին և թաղվել Ամաղու Նորավանքում<sup>9</sup>, ուր և մինչև այժմ գտնվում է նրա տապանաքարը հետևյալ մակագրությամբ. «զՀայր Տեսան Ստեփանոսի տէր Գրիգոր լիչեցեք»<sup>10</sup>: Սակայն որոշակի չենք կարող ասել, թե Գրիգոր Մեղրեցին Աթոռը տեղափոխել է Նորավանք, քանի որ Ստ. Օրբելյանի հիշած Նորավանքի եպիսկոպոսների շարքում (որոնք մինչև Ստ. Օրբելյան յոթն են) նրա անունը չի նշված<sup>11</sup>:

Գրիգոր Մեղրեցուն հաջորդում է իր որդին՝ Ստեփանոսը: Աթոռակալման թվականը Օրբելյանը չի նշում, այլ պարզապես՝ «Եւ յաջորդէ զտեղին որդի նորին Ստեփանոս մանուկ տիօք, լի ամենապատիկ շնորհօք, սիրեցեալ և մեծարեալ յաչս աւագաց, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ Աթաբեկին և որդւոյ նորա Փալհաւանին և Խզի Ասլանին և Բուքաք Աթաբեկին, որք և զգուական անուամբ Ֆախր էլ Մսեհ կոչէին, որ թարգմանի «սիրող Բրիստոսի» և պատուէին զնա տուղրալի գրոյ և փարմանաւ և մանչուրաւ, զոր մեք սիգել»<sup>12</sup> կոչեմք»<sup>13</sup>: Հավանաբար նրա աթոռակալության անցման սկիզբը պետք է համարել 1170 թ.՝ հոր մահից երկու տարի հետո, ինչպես և ընդունել է Ալիշանը<sup>14</sup>, հաշվի առնելով նրա՝ մետրոպոլիտ նշանակվելու համար Կիլիկիա գնալու ժամանակահատվածը: Ելտկուզ աթաբեկի կողմից «սիրեցեալ և մեծարեալ» լինելը (իշխել է 1148/9—1172 թթ.)<sup>15</sup>, նույնպես ցույց է տալիս, որ նա աթոռակալել է 1172 թվականից առաջ: Եվ քանի որ Գրիգոր Գ Պահլավունին վախճանվել է 1166 թվականին, իսկ նրան հաջորդած Ներսես Ծնորհալին զահալակյալ է 1166—1173 թվականներին, ապա Ստեփանոս Գ-ը իր ձեռնա-

դրությունն ստացել է Ներսես Ծնորհալուց: Կիլիկիայում նա ակամատես է լինում հայ ճարտարապետության, գրականության և ընդհանրապես հայ մշակույթի բուն վերելքին, որը և մեծ տպավորություն է գործում նրա վրա:

Ստեփանոս Գ-ը հաստատվում է ոչ թե Տայթնում, այլ աթոռանիստ է ընտրում Ամաղու Նորավանքը, ուր թաղված էր և իր հայրը՝ Գրիգոր Մեղրեցին, որովհետև «հին աթոռն աներեալ էր և ապականեալ»<sup>16</sup>: Աթոռի տեղափոխման մյուս և զլիսավոր պատճառն, անշուշտ, Սյունյաց թագավորության վերջնական կործանումն էր: 1170 թվականին ընկալ այս թագավորության ամենագլխավոր ամրոցը՝ Բաղաբերդը, և բազմաթիվ ձեռագրերի հետ հափշտակվեցին նաև այստեղ պահված Տաթևի ու շրջակայքի վանքերի ողջ սպասքն ու հանդերձանքը, մինչդեռ Վաղոց ձորը գերծ մընաց այդ ավերածություններից, ուր և ապաստան գտան Կապանի իշխանական տոհմերի մնացորդները<sup>17</sup>:

Աթոռանիստը տեղափոխվելուն օրինական ձև տալու համար Ստեփանոս Գ-ը դիմում է սելջուկ սուլթանին և կարողանում է նրանից հրամանագիր ու սիգել վերցնել, «զի ի նմա ժառանգեցեն ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն»<sup>18</sup>: Այնուհետև դիմում է ժամանակի կաթողիկոս Գրիգոր Դ Տղային (1173—1193) և նրանից շրջաբերական թուղթ է խնդրում՝ Սյունյաց մետրոպոլիտության նոր նստավայրի և Նորավանքի վիճակի վերաբերյալ: Ելտկուզ աթաբեկից (սա իշխում էր Գանձակում և կարճ ժամանակով իր իշխանությանն էր միացրել Հայաստանի հյուսիսային շրջանները, ընդ որում և Սյունիքը)<sup>19</sup> հաստատուն մանչուր է վերցնում՝ Ամաղու Նորավանքի նախկին կալվածքների վերաբերյալ, դրանց ավելացնելով նաև Ագարակի ձոր գյուղն ու Անապատի բերդը: Ելտկուզ աթաբեկի այս «առատաձեռնությունը», մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ Վրաստանի հետ գոտեմարտի պատրաստվող Գանձակի ամիրությունը սկզբնական շրջանում բոլորովին ձեռնադրել էր իր հանդեպ կրոնական թշնամանքի հրահրել տեղի քրիստոնյա բնակչությանը: Ընդհակառակն, ինչպես քիչ հետո կտեսնենք, նրանք հանդուրժում են նույնիսկ Ելիկում Օրբելյանի կողմից

<sup>9</sup> Նույն տեղը:  
<sup>10</sup> Ս. Բարխուդարյան, «Դիւան հայ վիմագրության», հտ. Գ, Երևան, 1967 թ., էջ 234:  
<sup>11</sup> Ստ. Օրբելյան, էջ 364:  
<sup>12</sup> Ըստ Ա. Աբրահամյանի, Տուրքա գիրը սուլթանական պաշտոնական գրություն է, իրախտական բովանդակությամբ, ֆարմանը և մանչուրը հրովարտակն է, իսկ սիգելը նշանակում է կայսերական հրամանագիր: Տես «Սյունիքի պատմություն», էջ 493:  
<sup>13</sup> Ստ. Օրբելյան, էջ 251: (Հր. Աճառյանը «ֆախր էլ Մսեհ» թարգմանել է «պարծանք քրիստոնեից»: Տես Հր. Աճառյան «Հայոց անձնանունների բառարան», հտ. Դ, էջ 618):  
<sup>14</sup> Ղ. Ալիշան, Նշվ. աշխատ., էջ 20:  
<sup>15</sup> Հ. Մանանդյան, Երկեր, հտ. Բ, Երևան, 1978 թ., էջ 110—111:

<sup>16</sup> Ստ. Օրբելյան, էջ 257:  
<sup>17</sup> Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երևան, 1981 թ., էջ 42:  
<sup>18</sup> Ստ. Օրբելյան, նույն տեղը:  
<sup>19</sup> Հ. Մանանդյան, Նշվ. աշխատ., էջ 140:

կրոնափոխության իրենց առաջարկի մերժումը և ամուսնությունը քրիստոնյա կնոջ հետ, թողնելով իր պաշտոնին, այսինքն՝ որպես Նախիջևանի որոշ շրջանների կուսակալ:

Պետք է նկատել, որ Ստեփանոս Ծախր էլ Մսեհի կողմից պատահական չէր Աթոռի համար Ամաղու Նորավանքի ընտրությունը. դեռևս Կապանի ավերումից (1103)<sup>20</sup> հետո, 1105 թվականին, այստեղ էր հաստատվել Բաղքի Հասան իշխանի որդին՝ Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսը, որը տարբեր միջոցներով ավելացրել էր վանքապատկան գյուղերի ու հողատարածությունների թիվը, բարվոքել վանքի տրևտեսական վիճակը, հավաքել «կրոնատոր ու ճգնակեաց» հոգևորականներ, մահմեդական տիրակալներից հատուկ հրամանագիր էր վերցրել այս նոր եպիսկոպոսական վիճակի վերաբերյալ և այլն: Ամաղու Նորավանքը հռչակված էր նաև որպես սրբավայր-մխտատեղի. Նորավանքի մոտ էր կառուցված Ս. Փոկաս մատուռ-եկեղեցին, ուր թաղված էր Ս. Փոկաս Հայրապետի մասունքը: Միաժամանակ այստեղից կարելի էր անմիջական կապի մեջ լինել թե՛ սելջուկյան պետության իշխանության ներքո գտնվող Հայաստանի խոշոր կենտրոններից մեկի՝ Նախիջևան քաղաքի, և թե՛ ընդհուպ մինչև Սևանի հյուսիսային տարածքներն ու Արարատյան դաշտավայրի մի զգալի մասը ազատագրած Չաքարյան իշխանների ու վրաց արքունիքի հետ: Մյուս կողմից Բաղաց թագավորության կործանման ու ավերման ժամանակ Վայոց ձորը չէր մտնում այդ թագավորության կազմի մեջ: Այն դեռևս Գագիկ Ա Բագրատունու (988—1020) ժամանակ անջատվել էր այդ թագավորությունից և կցվել Բագրատունյաց թագավորությանը<sup>21</sup>, և հետագայում գրավվել սելջուկների կողմից, հավանաբար Նախիջևանի հետ միասին՝ 1170 թվականից առաջ: Ուստի Բաղաց թագավորության անկման ժամանակ այդ թագավորությանը ենթակա շրջանների նման չէր ավերվել: Սա երևում է հատկապես այն փաստից, որ Սյունիքի թագավորական տան ժառանգներից ոմանք, Բաղաբերդի անկումից հետո, ապաստան են գտնում Վայոց ձորում<sup>22</sup>:

Վերադառնալով Սյունիք և հաստատվելով Ամաղու Նորավանքում, նորընծա մետ-

րոպոլիտը սերտ կապեր է հաստատում մի կողմից Ելտկուզ աթաբեկի, նրա որդիներ Փահլավանի ու Խզիլ Ալանի, և մյուս կողմից՝ Թամար թագուհու (1184—1213), Գեորգի Լաշայի (1213—1223), Չաքարե սպասալարի (ընդհանուր գորահրամանատար) և Իվանե աթաբեկի (խնամակալ, փոխարքա) հետ: Վերջիններս Կայեն գավառում նրան «հանգստյան տեղ են հատկացնում» Հաղարծինն ու Աբասաձոր գյուղը: Հետագայում Սյունյաց Օրբելյանների տիրությունների մաս են կազմում ինչպես այս, այնպես էլ Կայեն գավառի այլ տարածքներ<sup>23</sup>: Սակայն փաստեր չլինելու պատճառով չենք կարող ասել, թե արդյո՞ք Հաղարծինը այս ժամանակահատվածում կցվել էր Սյունյաց մետրոպոլիտությանը: Առավել ևս, որ Հաղարծինի արձանագրություններում որևէ հիշատակություն չկա Սյունյաց մետրոպոլիտների կամ Օրբելյան իշխանների մասին:

Ստեփանոս Գ-ի կարևոր ձեռնարկումներից մեկն է լինում Տաթևի ավերված եկեղեցիների վերանորոգումը: Տաթևն ավերվել էր 1138 թվականի Գանձակի երկրաշարժի ժամանակ. «...եղև շարժն Գանձակայ ի 587 թուականին և դողաց երկիր ի հիմանց. և գմբեթն մեծ եկեղեցուն ի Տաթև բոլորապոյր շրջեկան թոնա և անկառ ի վերայ սուրբ Գրիգորուն և գաթին որ ի դրանն կայր և փոյց առ հասարակ»<sup>24</sup>: Սակայն Ստեփանոսը կարողանում է վերակառուցել միայն գլխավոր եկեղեցու գմբեթը, ինչպես նշում է Օրբելյանը. «Սա նորոգեաց գխախտեալ եկեղեցին ի Տաթև գտորք Առաքեալքն (իմա՛ Պողոս Պետրոս եկեղեցին—Տ.հ.), և ետ դնել զգմբեթն ի ձեռն հօրն Յակոբայ Ճահկեցոյ»<sup>25</sup>: Ցավոք, որևէ արձանագրություն չի պահպանվել այս վերանորոգման վերաբերյալ: Ստեփանոս Գ-ին չի հաջողվում վերանորոգել Տաթևի համալիրի խարխլված մյուս եկեղեցիները ևս: Պետք է ենթադրել, որ ինչպես քաղաքական վիճակը, այնպես էլ նյութական միջոցները թույլ չէին տալիս նրան միանգամից նման մեծածավալ աշխատանք անել: Հավանաբար Տաթևի վերանորոգման ծախսերը հոգալու համար է, որ ձեռներեց առաջնորդ ստիպված է եղել գրավ դնելու «...գտեր Յովհաննիսի զառազ խաչն և զթիթեղնակապն, որ ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն, և կամարակապն զկամար

<sup>20</sup> Նույն տեղը, էջ 83:

<sup>21</sup> Թ. Խ. Հակոբյան, 'Նշվ. աշխատ., էջ 63:

<sup>22</sup> Նույն տեղը:

<sup>23</sup> Գ. Մ. Գրիգորյան, 'Նշվ. աշխատ., էջ 51:

<sup>24</sup> Ստ. Օրբելյան, էջ 250:

<sup>25</sup> Նույն տեղը, էջ 251:

ակնածն թեւ ի թեւ»<sup>26</sup>, որ հետագայում տարբեր վեճերի ստիժ է տալիս: Ինչպէս վերևում նշեցինք, Ստեփանոս Գ-ն իր հենարանն արտաքին կապերի միջոցով կապեր էր հաստատել Վրաց արքունիքի ու հատկապէս Զաքարյան իշխանների հետ: Դրա վառ ապացույցն է ինչպէս Հաղպատում Զաքարեի ու Իվանեի քրոջ որդուն՝ Գրիգոր Տուտեորդուն, եպիսկոպոս ձեռնադրելը 1189 թվականի շուրջ<sup>27</sup> («...ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաղպատ գտէր Գրիգորիս՝ քեռորդի Զաքարեի և Իւանեի»)՝<sup>28</sup>, այնպէս էլ Զաքարյան եղբայրների նվիրատվությունները: Մյուս կողմից, Ստեփանոսը աշխատում է չգծովել Ելտկուզ աթաբեկին հաջորդած նրա որդիների՝ Խզիլ Ալվանի ու Մուհամմեդ Փահլավանի հետ, որոնք երկու մասի էին բաժանել իրենց ժառանգած ընդարձակ երկիրը, և հյուսիսային մասը բաժին էր ընկել Փահլավանին: Ստեփանոսը երբեմն այցելում էր այս բռնակալներին, որի համար և ներքան սիրում և մեծարում էին. «...սիրեցեալ և մեծարեալ յաչս աագաց, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ աթաբեկին և որդոց նորա Փագհաւանին և Խզիլ Ալվանին»<sup>29</sup>: Սակայն այս «սիրեցեալ և մեծարեալ» լինելն հետևանք էր այն բանի, որ 13-րդ դարի վերջին քառորդին ներքին գծությունների պատճառով թուլացել էր սելջուկյան պետությունը, և ժամանակի սելջուկ իշխանապետները, նկատի ունենալով օրավոր հզորացող հայ-վրացական ռազմական համագործակցությունը, չէին ցանկանում նոր ընդհարումների դուռ բանալ: Այս է պատճառը, որ սելջուկները լռելյայն համաձայնվում են Ելիկումի ամուսնությանը Ստեփանոս Գ-ի քրոջ աղջկա՝ Խաթունի հետ: Օրբելյան պատմիչը պատմում է, որ վրաց արքունիքի դեմ Օրբելյանների գլխա-

վորած անհաջող ապստամբությունից հետո Գանձակում ապաստանած Լիպարիտ Օրբելյանի որդին՝ Ելիկումը, Նախիջևան գալով, իր մոտ է կանչում Ստեփանոս եպիսկոպոսին, ընկնում նրա առաջ, մեծ զրոյշմամբ խոստովանում իր մեղքերը և հաղորդություն խնդրում: Այնուհետև Ելիկումը հետամուտ է լինում ամուսնության հարցի լուծմանը, որպէսզի այս կերպ ձեռքազատվի սելջուկ իշխանների՝ մահմեդականություն ընդունելու և մահմեդական կենց՝ հետ ամուսնանալու պնդումներից: «...և ոչ գտանէր ի քրիստոնէից գոք պատշաճ իրոյ խնամութեան, զի աշխարհս այս դէռ ևս ի ներքոյ իշխանութեան Պարսից էր: Վասն որոյ հաւանեալ խնամութեան Սիւնեաց եպիսկոպոսի՝ տեսն Ստեփանոսի, զի հոգևոր աստիճանաւ բարձր էր քան զնա՝ խնդրէր ի նմանէ զդուսոր քեռ նորսա»<sup>30</sup>, գրում է Օրբելյանը: Անշուշտ, այս ամուսնության հարցում կարևոր դեր է խաղացել Ստեփանոս եպիսկոպոսը:

Ելիկումի և Խաթունի ամուսնությունից ծնվում է մի արու զավակ, որին կոչում են պարսի անունով՝ Լիպարիտ: Սակայն շուտով, 1184 թվականի Գանձակի ճակատամարտի ժամանակ<sup>31</sup>, որ մղվում էր սելջուկների ու վրացիների միջև, յուրայինների կողմից սպանվում է Ելիկումը, որ հարկադրաբար հանդես էր գալիս սելջուկյան բանակի կազմում: Ծակատամարտի ժամանակ Խաթունն ու մանկահասակ Լիպարիտը սելջուկների կողմից խիստ հսկողության տակ պահվում էին Ճահուկ զավատում: Պատճառը պարզ է. սելջուկները կասկածում էին Ելիկումի հավատարմությանը: Ելիկումի մահից և Խաթունի՝ փախուստի անհաջող փորձից հետո, Լիպարիտին ու իր մորը Ճահուկից տեղափոխում են Նախիջևան, որ և «տաճիկ մի բռնաբարեալ զԽաթունն՝ ածէ ի տունն իր և առնու զնա կին»<sup>32</sup>: 1211 թվականին Զաքարյանները գրավում են Սյունիքի մի զգալի մասը: Նրանց մոտ է շտապում Ստեփանոս Գ-ը և տեղեկացնում, որ Նախիջևանում է գտնվում Ելիկումի միակ որդին՝ Լիպարիտը, որն այդ ժամանակ առնվազն 26 տարեկան պիտի լիներ: Զաքարյանները Ստեփանոսին առաջարկում են իրենց մոտ բերել նրան: Ստեփանոս Գ-ը բարեհաջող կերպով կատարում է այդ առաջադրանքը:

Լիպարիտը, միացած Զաքարյան եղբայրների ջոկատներին, մեկը մյուսի տես-

<sup>26</sup> Նույն տեղը, էջ 258: Մեծ կամ Ավագ Խաչի հետ գրավ դրված «թիթեղնակապն ու կամարակապը», ըստ Ղ. Ալիշանի, նույնպէս խաչեր են. «...և սուպեաց զնա (Սարգիս եպիսկոպոսին—ծ.հ.) ստ Աթաբեկն Իւանէ՝ խնդրել զԱւագ անուանեալ Խաչն, որ ընդ երկուց այլոց խաչից՝ Կամարակապ և Թիթեղնակապ կոչեցելոց՝ եղեալ էր ի գրասական» («Սիսական», էջ 185): Իսկ ըստ Ա. Աբրահամյանի. «Թիթեղնակապն ու կամարակապը ոսկե զարդեր են, որ կրում էին բարձրաստիճան կրոնավորները» («Սյունիքի պատմություն», էջ 248): Մենք հակված ենք ընդունելու Ղ. Ալիշանի բացատրությունը, քանի որ նման «զարդերի» համար դժվար թե այդպիսի մեծ վեճ ծագեր:

<sup>27</sup> Սյունիքի պատմություն, էջ 495:

<sup>28</sup> Ստ. Օրբելյան, էջ 251:

<sup>29</sup> Նույն տեղը:

<sup>30</sup> Նույն տեղը, էջ 288—289:

<sup>31</sup> Գ. Մ. Գրիգորյան, Նշվ. աշխատ., էջ 46:

<sup>32</sup> Ստ. Օրբելյան, էջ 290:

վից սկսում է ազատագրել Սյունյաց գավառները: «Եւ զի նա եղև առաջնորդ աման Սիւնեաց և այլ բերդերոյն, տայ (Ի վանէ Զարարյանը—Ճ.Ռ.) և ի ձեռն նորա զՍիւնիս, զՍիրոտն, զԲարկուշատ և զայլ բերդորէան»<sup>33</sup>: Այսպիսով, արդէն մոր կողմից Սյունյաց բարձրաստիճան խալիֆի հետ ազգակցական կապ ունեցող Օրբելյանների այս շտապիլը հաստատվում է Սյունիքում և սկիզբ դնում Սյունյաց Օրբելյանների ճյուղին, որը կարճ ժամանակի՛ւս ընթացքում մեծապէս հզորանալով, մեծ դեր է կատարում Սյունիքի տնտեսական, մշակութային ու ռազմական վերելքի գործում:

Սյունյաց եռանդաշատ ու ձեռներեց առաջնորդը՝ Ստեփանոս Ֆախր Էլ Մսեհը, այդ ժամանակ արդէն ծերացել էր: Նրա վերջին ցանկությունն է լինում եւս վերադարձնել Սյունյաց Աթոռի սրբությունները՝ Տեր Հովհաննէսի Մեծ խաչը, Թիթեղնակապն ու Կամարակապը, որոնք, Տաթևի վերանորոգման ծախսերը հոգալու համար, գրավ էր դրել Ծախապոնքի (Ճահուկ գավառում) Ածոպ վանքի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի մոտ<sup>34</sup>: Սակայն Կասակ Խաղբակյանը հափշտակում է դրանք, Խաչը նվիրում Իվանէ Զարարյանին, իսկ «Թիթեղնակապն ու Կամարակապը» դնում իր իշխանության տարածքում գտնվող Կեչառիսի վանքում: Ստեփանոսին հաջողվում է բազում ջանքերի շնորհիվ ազատել Խաչը, բայց մյուս երկուսը մնում են Կեչառիսում:

Տեր Սարգիսը, որ Ստեփանոս Գ-ի կողմից հաջորդ աթոռակալ էր նշանակվել և եպիսկոպոս ձեռնադրվել, գնում է Խաչը Նորավանք բերելու. «Եւ նորա գնացեալ առնու զխաչն խնդութեամբ, և անցեալ փոթանակի գալ հասանէ ի Նորավանս ուխտ և բնակեցուցանէ անդէն գտրբ նշանն. որ և եգիտ վախճանեալ զքեռին իր տէր Ստեփաննոս»<sup>35</sup>: Տեր Ստեփանոսը վախճանվել է 1216 թվականին, Արփա (այժմ՝ Արենի) գյուղում և թաղվել Ամադու Նորավանքում՝ իր հոր՝ Տեր Գրիգորի գերեզմանի մոտ<sup>36</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով Ստեփանոս Գ Ֆախր Էլ Մսեհի կյանքն ու գործունեությունը, պատմության խորքերից մեր սոցն է հառնում անձնվեր հոգևորականի, հեռատես քաղաքական գործչի ու մեծ հայրենասերի հերոսական մի կերպար:

Ավելացնենք նաև, որ Ստեփանոս Գ-ին է վերագրվում այժմ կորած մի պատմական աշխատություն՝ Բաղաց թագավորության մասին, որը նա գրել է Մխիթար Անեցու խնդրանքով: Այս կորած գործի հեղինակի մասին Հ. Մարգարյանը գրում է. «...հավանաբար, Ստեփանոս Գ Ֆախր Էլ Մսեհն է (1168—1216): Ստեփանոս Բ-ի ժամանակ (1116—1143) Մխիթարը դժվար թե այնքան բարձր դիրքի հասած լիներ, որ այդպիսի պատվեր տար Սյունյաց եպիսկոպոսին և նրա մասին այդքան պատկանաբով գրեր Օրբելյանը... Ստեփանոս եպիսկոպոսի երկին, ինչպես երևում է, ծանոթ է եղել նաև Վարդան Արևելցին»<sup>37</sup>, այս գործից մեծապէս օգտվել է նաև Ստեփանոս Օրբելյանը՝ իր աշխատությունները գրելիս:

Ստեփանոս Գ-ի մահից հետո Սյունյաց Աթոռը բաժանվում է երկու առանձին Աթոռների: Դեռևս Ստեփանոս Գ-ի կենդանության օրոք եպիսկոպոս էր ձեռնադրվել իր քրոջ որդին՝ Տեր Սարգիսը, որը Ամադու Նորավանքի Սարգիս անունով առաջին եպիսկոպոսն է<sup>38</sup>. «Սո կենօք սորին (իմա՛ Ստեփանոս Գ-ի—Ճ.Ռ.) էր ձեռնադրեալ եպիսկոպոս տէր Սարգիս՝ քեռորդի սորին հրամանաւ քեռոյն իրոյ լՍղոսանից կաթողիկոսէն»<sup>39</sup>: Ինչպես վերևում նկատեցինք, Ստեփանոս Գ-ը իր ձեռնադրությունն ստացել էր Ներսես Ընդրհալուց, և նրա գործունեության ժամանակ որևէ վկայություն չկա Սյունյաց և Աղվանից Աթոռների հարաբերության մասին, ուստի չենք կարող ասել, թե Սյունյաց մետրոպոլիտությունը այդ ժամանակ միացել էր Աղվանից Աթոռին: «Ձեռնադրեալ եպիսկոպոս» ասելով Օրբելյանն այստեղ, ըստ երևույթին, նկատի ունի որպես ապագայի Սյունյաց Աթոռի առաջնորդ-եպիսկոպոս:

Հատկանշական է, որ Ստեփանոս Գ-ի մահից և Աթոռի երկփեղկումից հետո երկու աթոռակալներից որևէ մեկը չի կոչվում այլևս մետրոպոլիտ կամ արքեպիսկոպոս, այլ պարզապես եպիսկոպոս: Դա գալիս է ասելու, որ Ստեփանոս Գ-ի մահից հետո՝ 1216 թվականից մինչև Ստեփանոս Օրբելյան, մինչև 1286 թվականը, Սյունիքը դադարել էր որպես մետրոպոլիտություն լինելուց: Դրա վկայությունն է նաև Օրբելյանի հետևյալ տողը. «...որք և (այսինքն՝ Նորավանքի և Տաթևի եպիսկոպոսները—Ճ.

<sup>33</sup> Նույն տեղը, էջ 291:

<sup>34</sup> Նույն տեղը, էջ 258:

<sup>35</sup> Նույն տեղը, էջ 259:

<sup>36</sup> Ղ. Ափշան, Նշվ. աշխատ., էջ 185:

<sup>37</sup> Մխիթար Անեցի, «Մատենի աշխարհավազ հանդիսարանաց», աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983 թ., էջ 6:

<sup>38</sup> Այսուհետև՝ Սարգիս Ա:

<sup>39</sup> Ստ. Օրբելյան, էջ 251:

ն.) միաբան թղթովք և ընծայիք լուղարկեալ էին գնա (իմա՝ Ստ. Օրբելյանին—ճ.ն.) առ կաթողիկոսն վասն նորոգման սուրբ աթոռոյն հին պատուոյ և աստիճանին»<sup>40</sup>: Դժվար է որևէ բացատրություն տալ իր կյանքի մայրամուտին գտնվող Ստեփանոս Գ-ի այս քայլին, քանի որ բնական պիտի լինէր, եթէ Սարգսին ուղարկէր Հայոց կաթողիկոսի մոտ՝ Կիրիկիա, ինչպէս որ ինքն էր գնացել, և ոչ թէ Աղվանից կաթողիկոսի: Թերևս Ստեփանոսի այս քայլի դրապատճառը ժամանակի Հայ Եկեղեցու ներքին իրավիճակը համարենք, որ բոլորովին էլ մխիթարական չէր: Չնայած Գրիգոր Զ Ասիրատյանի (1194—1203) մահից մի քանի տարի հետո որպէս օրինակական կաթողիկոս ընտրվել էր Հովհաննէս Զ Ստեփան (ըստ Օրմանյանի, Ստեփան հաջորդել է Ասիրատյանին ոչ թէ անմիջապէս, այլ մի քանի տարի անց)<sup>41</sup>, սակայն կաթողիկոսական Աթոռներ էին հռչակվել նաև Անին, Սեբաստիան, Սիսը և Աղթամարը<sup>42</sup>, իսկ Հովհաննէս Զ-ը Լեւոն թագավորի հետ գծովել և քաշվել էր Հոռովկա, չնայած իր Աթոռից չէր հեռացել: Մյուս կողմից, բուն Հայաստանի կամ Արևելյան եկեղեցիները, հատկապէս Տուտեղոյի-Լամբրոնացի հալստի վեճից, 1208 թվականի Լոռիի, ապա և Անիի ժողովներից հետո<sup>43</sup>, ինչպէս և Կիրիկիայում գտնվող Աթոռի կաթողիկամետ տրամադրությունների պատճառով մի տեսակ ստեղ էին Մայր Աթոռի հանդէպ և նախկին վատահոյությունը չունենին: Թերևս այս Աթոռներից միայն Աղվանքի կաթողիկոսությունն էր, որ գտնվելով քաղաքական անբարենպաստ վիճակում (այդ ժամանակ այն գտնվում էր սելջուկյան իշխանության ներքո, ինչպէս և Սյունիքը, և հատկապէս Գանձակի շրջանում անբնդհատ կռիվներ էին մղվում հայ-վրացական և սելջուկյան զորքերի միջև), մտահոգված էր Հայոց կաթողիկոսության հովանու ներքո իր գոյությունը պահպանելով, ուր և դիմում է Ստեփանոս Գ-ը, հետագայում Սյունյաց Աթոռը

այլևայլ ազդեցություններից զերծ պահելու նպատակով: Հատկանշական է, որ ինչպէս Լոռիի ու Անիի ժողովներին ներկա եղած եպիսկոպոսների ցուցակում, որ բնակվում էին Զաքարեի նորամուծություններն ու Կիրիկիայի կաթողիկոսության համաձայնությունն ու առաջարկները, այնպէս էլ Տուտեղոյի-Լամբրոնացի վեճի ընթացքում չի հիշվում Ստեփանոս Գ-ի անունը<sup>44</sup>:

Մինչ Սարգիս Ա-ին անցնելը, նկատենք մի արձանագրության մեջ տեղ գտած թվականն սխալը, որը սերտ կապ ունի Սարգիս Ա-ի այտուակալման թվականի ճշուման հարցում: Օրբելյանը գրում է, որ Զաքարե Զաքարյանը Երևուզ աթաբեկից ստացած Ագարակի ձոր գյուղը վերադարձնում է Ամաղու Նորավանքին և գրում համապատասխան կալվածագիր. «Ես մեղուցեալ ծառայս Քրիստոսի Զաքարէ, Ամիր սպասալար՝ որդի մեծին Սարգսի՝ Հայոց և Վրաց ապարասպետի, դարձուցի զԱգարակի ձոր գիւղն ի Նորավանս ազատ յամենայն հարկաց և խնորեցի ի տէր Սարգստ՝ առաջնորդ սուրբ ոխտին... ի թուսականն Հայոց 660(1111)»<sup>45</sup>: Սակայն այս գյուղերը, ըստ նույն Օրբելյանի, նվիրվում կամ վերադարձվում են Նորավանքին՝ Ս. Կարապետ եկեղեցու կառուցման նախկատիքին, որը եղել է 1216 թվականին<sup>46</sup>:

Սարգիս եպիսկոպոսին առաջին անգամ հանդիպում ենք Ստեփանոս Գ-ի կյանքի մայրամուտին, գրավ դրված Խաչը վերադարձնելիս, երբ վերջինիս պատվերով ու հատուկ գրությամբ գնում է Իվանե Զաքարյանի մոտ և բարեհաջող կերպով Խաչը վերադարձնում Ամաղու Նորավանք: Սակայն, ինչպէս նկատեցինք, մինչ նա տեղ կհասներ, Ստեփանոս Գ-ը վախճանվում է: Եվ քանի որ դեռևս վերջինիս կենդանության ժամանակ Սարգիսը հաջորդ էր ճանաչվել, ուստի նա էլ հաջորդում է Սյունյաց Աթոռին:

Ստեփանոս Գ-ի մահվան թվականը, ինչպէս նկատեցինք, Օրբելյանը դնում է 1216-ը, որին «չաջորդէ գտնելն տէր Սարգիս»<sup>47</sup>: Սակայն տարակուսանք է առաջացնում Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի՝ Ս. Աստվածածին եկեղեցու խորանի այժմ կորած մի խաչքարից արտագրած հետևյալ արձանագրությունը. «Թվին ՈՎԴ (1215) ի Հայրասպետութեան Տեառն Սարգսի Սինեաց եպիսկոպոսի, ես Յակոբս կանգնեցի

<sup>40</sup> Նույն տեղը, էջ 313:  
<sup>41</sup> Մ. արքեպ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Ա, Բեյրութ, 1959 թ., էջ 1559:  
<sup>42</sup> Նույն տեղը, էջ 1583, 1589. «Սրա կենդանության ժամանակ եպ. էր ձեռնադրվել սրա (Ստեփանոս Գ-ի) քրոջ որդին, իր քեռու (Ստեփանոս Գ-ի) հրամանով, Աղվանից կաթողիկոսից»: Ս. Արամանյանը այս տողը թարգմանել է հետևյալ կերպ, որը սխալ է. «Ինչ սրա կենդանության օրոք եպիսկոպոս է ձեռնադրվել իր քրոջորդի Տեր Սարգիսը՝ Աղվանքի կաթողիկոս իր քեռու հրամանով», «Սյունիքի պատմություն», էջ 285:  
<sup>43</sup> Նույն տեղը, էջ 1516, 1578, 1588:

<sup>44</sup> Նույն տեղը:  
<sup>45</sup> Ստ. Օրբելյան, էջ 262—263:  
<sup>46</sup> Ս. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագր.», հտ. Գ, էջ 209:  
<sup>47</sup> Ստ. Օրբելյան, էջ 257:

գլխաչա ծնողի իմոյ Խաչիկին, լիշեցեք»<sup>48</sup>: Սակայն Օրբելյանը որոշակիորեն նշում է, որ Չարեք բերդը Իվանեն պաշարել էր 1216<sup>49</sup> թվականին, ուր և Ստեփանոս Գ-ի պատվերով գնում է Սարգիսը՝ Ավագ Խաչը ստանալու: Մի այլ տեղ նույնպես Ստեփանոս Գ-ի մահը դնում է 1216 թվականին<sup>50</sup>: Ուստի արձանագրության վերջին միավորը՝ Գ-ն, պետք է լիներ Ե, որը կա՛մ փորագրողի պապն է, կա՛մ էլ Սմբատյանցն է պապ կարդացել: Իսկ եթե ընդունելու լինենք, որ արձանագրության թվականը ճիշտ է, ապա Ստեփանոս Գ-ի կենդանության ժամանակ՝ 1215 թվականից, հաջորդ աթոռակալ է նշանակվել և ճանաչվել Տեր Սարգիսը: Այսպիսի փաստերի պիտի հանդիպենք նաև մեր ուսումնասիրության հետագա ընթացքին:

Սակայն Տեր Ստեփանոսի մահից հետո նրա հորեղբորորդին՝ Հովհաննես առնունով, գնում է Աղթամար, այնտեղ ձեռնադրվում էպիսկոպոս և նստում Տաթևում<sup>51</sup>, այսպիսով հասնելով իր նպատակին, քանի որ «կամեր լինել աթոռակալ Սիսեաց»<sup>52</sup>: Տեր Հովհաննեսի այս փափագը համընկնում էր Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ձգտումներին նույնպես: Եվ Տեր Հովհաննեսը «երթեալ լԱխթամար ձեռնադրի անը»<sup>53</sup>:

Անշուշտ, ճիշտ չի լինի Տեր Հովհաննեսի այս քայլը ընդհանրացնել ողջ Սյունյաց Աթոռի վերաբերյալ և ասել, թե Սյունյաց Աթոռը միացավ Աղթամարի Աթոռին, քանի որ հակաթոռ պետք է նկատել ինչպես Աղթամարի կաթողիկոսության, այնպես էլ Տեր Հովհաննեսի ընթացքը: Հատկապես, որ Սարգիսը գնում է Կիլիկիա՝ Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221—1267) մոտ թե՛ վավերացնելու իր գահակալությունը և թե՛ ներկայացնելու համար ստեղծված վիճակը: Նա նախօրոք Նախիջևանի, Վայոց ձորի ու Ճահուկի թեմերը հաստատում է որպես «սեպհակյան ժառանգութիւն սրբոյ ուխտին իբրոյ Նորավանհի և զայն թողոյ ի նա»<sup>54</sup>: Այիշանն այս երկփեղկման պատճառը համարում է Տեր Սարգիսի ու Տեր Հովհաննեսի միջև Ավագ Խաչի շուրջ ծագած վեճը. «Դարձեալ յնտ ամաց վեճ

մեծ եղև ի վերայ խաչիս, յերկփեղկել և պիսկոպոսութեան Սիսեաց. զի Տեր Յովհաննես և հորեղբորորդի Տեանն Ստեփանոսի՝ որոյ վիճակեցաւ Տաթև, կամեր ընդ իր տանել զայն»<sup>55</sup>: Այս առթիվ Տեր Սարգիսը դիմում է Իվանեին, և Դվիճում էպիսկոպոսական ժողով գումարելով, որոշվում է Խաչը թողնել Նորավանքում, որովհետև «...մեռեալն և գերեալն զմի ունին օրինակ. որ ոք գնեռեալն յարուցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին գնա. և որ ոք զգերեալ թափէ՝ ոչ է ստացողին յայնմհետէ, այլ գերեթափին»<sup>56</sup>: Հավանաբար, Տեր Հովհաննեսի՝ Ավագ Խաչը Տաթև փոխադրելու պահանջը պարզապես առիթ էր՝ իր նպատակին հասնելու համար: Խաչի գտնվելը Աթոռներից որևէ մեկում հեղինակալի նշանակություն է ենթադրում:

Իր գահակալության առաջին իսկ տարում, Տաթևի բաժանումից անմիջապես հետո, Տեր Սարգիսը, Լիպարիտ Օրբելյանի օժանդակությամբ, ձեռնարկում է Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու շինությանը և ավարտում յոթ տարվա ընթացքում: Ըստ Օրբելյան պատմիչի, եկեղեցու շինությունն ավարտվել է 1223 թվականին, այսինքն Տեր Սարգիս աթոռակալությունից՝ 1216 թվականից 7 տարի հետո<sup>57</sup>: Սյունյաց պատմիչի նշած այս թվականները կասկածի տեղիք են տալիս, որովհետև Ս. Կարապետ եկեղեցու պատին շինարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը գրված է 1221 թվականին<sup>58</sup>: Թերևս 1221 թվականին հաջորդած երկու տարիներին ևս մասնավոր աշխատանքներ են կատարվել, որոնք և նկատի ունի Օրբելյանը: Ս. Արքրահամյանը ենթադրում է, որ արձանագրության թվականը պետք է լինի ՈՂԲ, այսինքն վերջին Բ-ն եղծվել է, ուստի այնտեղ ևս պիտի լիներ 1223<sup>59</sup>: Եկեղեցու կառուցման նավակատիքը կատարվում է «մեծահանդէս ժողովով՝ էպիսկոպոսօք, վարդապետօք, գահագլուխ իշխանօք, ազատօք և տանուտերօք»<sup>60</sup>, ուր և տարբեր իշխանների կողմից կատարվում են բազմաթիվ նվիրատվություններ<sup>61</sup>: Հատկանշական է, որ այդ արձանագրություններից մեկում Լիպարիտ Օրբելյանը գրում է. «Ես Լիպարիտ, որդի Ալակումի, թոռն մեծի

48 Մերոպ արքեպ. Սմբատյանց, «Տեղագրութիւն Գեղարքունոյ ծովազարդ գաւառի», Էջմիածին, 1895 թ., էջ 505:  
 49 Ստ. Օրբելյան, էջ 258:  
 50 Նույն տեղը, էջ 251:  
 51 Նույն տեղը:  
 52 Նույն տեղը, էջ 259:  
 53 Նույն տեղը:  
 54 Նույն տեղը, էջ 280:

55 Ղ. Այիշան, «Սիսական», էջ 185:  
 56 Ստ. Օրբելյան, նույն տեղը:  
 57 Նույն տեղը, 261:  
 58 Ս. Բաղդասարյան, «Դիվան», հտ. Գ, էջ 211:  
 59 «Սյունիքի պատմություն», էջ 501:  
 60 Ստ. Օրբելյան, նույն տեղը:  
 61 Տես «Դիվան», հտ. Գ, էջ 211, 212, 213, 214:

Արպելեանց... շինեցի զվանքս որ կոչի Նորավանք, յառ[աջ]նորդութեան Տէր Սարգսի Սինեաց վերադիտողի»<sup>62</sup>: Իսկ Գեղարքունիքի տերն ու Զաքարյան իշխանների բարձրաստիճան գործակալներից մեկը՝ Բուսաք անունով, որը նույնպես մասնակցել էր Ս. Կարապետ եկեղեցու նախակատիքին, իր նվիրատվական կազմածագրի մեջ Տէր Սարգսին անվանում է «երջանիկ Հայրապետս մեր Տէր Սարգիս»<sup>63</sup>: Սա ևս գալիս է ցույց տալու, որ Տէր Հովհաննեսի կողմից անջատված Տաթևի Աթոռը մասնավոր Աթոռ էր, որի հետ չէին հաշտվում Սյունյաց իշխողներն ու բարձրաստիճան անձինք: Սարգիս Ա-ի հետագա գործունեության մասին այդ ժամանակը ներկայացնող մատենագիրները (Վարդան, Գանձակեցի և այլն) լռում են, իսկ Սյունյաց պատմիչը հաղորդում է ընդհանուր խոսքերով. «...լետ բազում արդեանց և երևելի արարածոց գնայ ի Կիլիկիա առ բարեպաշտ արքայն Հայոց Հեթում, և պատի յոլով ընկալեալ ի նմանէ և տեղի հանգրստեան»<sup>64</sup> գտազ Մէլիճին. և բազումս ճգնեալ անդ՝ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի գերեզման Աստուծոյն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի...»<sup>65</sup>: Արդ, Հեթում Ա-ը գահակալել է 1226—1272 թվականներին<sup>66</sup>: Ուրեմն, Սարգիս Ա-ը Կիլիկիա է գնացել 1226 թվականից հետո: Կիլիկիայում նրա առաջին գործը լինում է Կոստանդին Ա. Բարձրբերդցու կողմից հաստատել Նորավանքը որպէս առանձին Աթոռ. «Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին՝ առնու ի նմանէ վիճակ հաստատուն անխախտելի դաշամբ և թորոջ շրջաբերական վասն այսց գաւառացս, զի լիցի հաստատուն վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցոյն Նորավանից»<sup>67</sup>: Այնուհետև Սարգիսը առանձնանում է Մելիճո վանքը, «և բազումս ճգնեալ անդ... գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ»<sup>68</sup>: Երուսաղէմում նա խաչակիրներից գնում է Ստեփանոս Նախավայի Աջը և ուղարկում Նորավանք: Երուսաղէմում էլ նահատակվում է իր երեք ուղեկիցների հետ: Սու. Օրբելյանը գրում է, որ երբ նրանք աղոթում էին Տիրոջ գերեզմանի վրա, «...առեալ Խորագմին գԵրուսաղէմ ի Փռանգէն»<sup>68</sup>,

սկսում են կոտորել բնակիչներին և գտնելով Տէր Սարգսին իր ուղեկիցների հետ, սպանում են աղոթքի վայրում: Այստեղ, անշուշտ, սխալվում է Օրբելյան պատմիչը, քանի որ Խվարեզմի շահը, կամ Խորեզմշահը մինչև Երուսաղէմ չի հասել, այլ հալածվելով մոնղոլներից, 1226 թվականին մտնում է Անդրկովկաս, մեծ ավերածություններ գործում և հասնում մինչև Ամիո: Սպանվում է 1231 թվականին՝ մոնղոլների կողմից պարտվելուց հետո Ամիոյից փախչելիս<sup>69</sup>: Այս մասին գրում են և՛ Գանձակեցին<sup>70</sup>, և՛ «Վրաց ժամանակագրությունը»<sup>71</sup>, և՛ Իբն Ալ-Ասիրը<sup>72</sup>: Այսպես է ընդունված նաև ժամանակակից ուսումնասիրությունների մեջ: Ծիշտ է, Իբն Ալ-Ասիրը գրում է, որ Զալալեդդինի գորքի մի մասը պարտվելուց հետո գնաց Խուման, մի ուրիշ խումբ դիմեց Մծբին, Մոսուլ, Սինջար, Արբելա և երկրի այլ վայրեր<sup>73</sup>, սակայն այստեղից չենք կարող եզրակացնել, թե Խորեզմշահի գորքի մի մասն էլ Երուսաղէմ է հասել և նույնիսկ գրավել այն: Օրբելյանն իր «Պատմության» մեջ այս փաստը վերցրել է տարիներ առաջ իր իսկ կազմած «Ժամանակագրությունից», ուր կարդում ենք. «Իսկ խորագմիքն անտերունջ գտեալ զաշխարհս, յանխնայ կոխեաց և աներեաց և գնաց մինչ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. և արեամբ քրիստոնէից ելից գտորբ տաճարն և զփողոցսն, քայց ինքն, ասի սպանեալ ի շոռոնց յանձնսն արանց»<sup>74</sup>: Օրբելյանը հավանաբար շփոթել է Եգիպտոսի Սալահեդդին սուլթանին Խորեզմի Զալալեդդինի հետ: 1229 թվականին խաչակիրները Այուբյան սուլթաններից գրավում են Երուսաղէմը, որին «վերստին տիրեցին մահմեդականները 1244 թվականին»<sup>75</sup>: Այն, որ Սարգիս Ա-ը վախճանվել է ոչ թե 1236 թվականին (որովհետև, ըստ Օրբելյանի, աթոռակալել է 20 տարի, իսկ Նորավանքի Աթոռին, ինչպես արդեն ասացինք, նստել է 1216 թվականից), այլ

<sup>62</sup> Նույն տեղը, էջ 211:  
<sup>63</sup> Գ. Մ. Գրիգորյան, Նշվ. աշխատ., էջ 129:  
<sup>64</sup> Սու. Օրբելյան, էջ 252:  
<sup>65</sup> «Հայ ժող. պատմություն», հտ. Գ, Երևան, 1976 թ., էջ 976:  
<sup>66</sup> Սու. Օրբելյան, էջ 260:  
<sup>67</sup> Նույն տեղը, էջ 252:  
<sup>68</sup> Նույն տեղը, էջ 252:

<sup>69</sup> Լ. Մանանդյան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1977 թ., էջ 198—206:  
<sup>70</sup> Կիրակոս Գանձակեցի, «Հայոց պատմություն», Երևան, 1982 թ., էջ 165—167:  
<sup>71</sup> «Վրաց ժամանակագրություն», Երևան, 1971 թ., էջ 71:  
<sup>72</sup> Արաբական աղբյուրներ, «Իբն Ալ-Ասիր», Երևան, 1981 թ., էջ 343:  
<sup>73</sup> Նույն տեղը:  
<sup>74</sup> «Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի», հրատարակության համար պատրաստեց Ա. Արրահամյանը, Երևան, 1942 թ., էջ 24:  
<sup>75</sup> ՀՍ Հանրագիտարան, հտ. Ե, Երևան, 1979 թ., էջ 17:

1244 թվականի շուրջ, որոշակիորեն երկվում է նույն Օրբելյանի «Պատմության» ՀԱ գլխում բերված եպիսկոպոսների ցանկից: Այդ ցանկը հետևյալն է. «Առաջին՝ Յովհաննես Կապանեցին—ամս ինչ: Ստեփաննոս, որդի տեառն Գրիգորի—ամս ինչ, Սարգիս—ամս 20, Ստեփաննոս—ամս 20, Գրիգոր—ամս 1, Սարգիս—ամս 24, Եւ ապա միապետեալ գերկոսին աթոռսն (նրստի) Ստեփաննոս (Օրբելեան) եպիսկոպոս Սիւնեաց և Նորավանհց՝ եօթներորդ»<sup>76</sup>: Նախ, հայտնի է, որ Ստեփաննոս Օրբելյանին Սյունյաց միավորյալ Աթոռին ընտրել են 1285 թվականին և ապա, որպես միացյալ Աթոռների գլուխ, ուղարկել են Կիլիկիա՝ ձեռնադրվելու<sup>77</sup>: Արդ, Սարգիս Ա-ը, ինչպես տեսանք, Ստեփաննոս Գ-ին (Ֆախր էլ Մսեհ) փոխարինել է 1215—16 թվականներին: 20 տարի աթոռակալելով, ըստ Օրբելյանի, պիտի մահացած լիներ 1236 թվականին, նրան հաջորդած Ստեփաննոսը՝ ևս 20, կլինի՝ 1256, այնուհետև Գրիգոր՝ 1, այսինքն՝ 1257, և վերջապես Սարգիս՝ 24, կլինի 1281: Ինչպես տեսնում ենք, բաց է մնում շուրջ 5—6 տարի:

Նախ նկատենք, որ պահպանվել է Նորավանքի երկրորդ Ստեփաննոսի տապանաքարը՝ 2Թ (1260) թվագրությամբ<sup>78</sup>: Իսկ Ստեփաննոսը, ըստ Օրբելյանի, աթոռակալել է 20 տարի, այսինքն՝ 1240 թվականից: (1240—1260): Ուստի նրանից առաջ եղած Սարգիս Ա-ը պիտի մահացած լինի այս

թվականի շուրջ, երբ Երուսաղեմի համար մամուլների ու խաչակիրների միջև կոնֆլիկտ էին մղվում: Իսկ Ստեփաննոսից հետո 1 տարի աթոռակալել է Գրիգորը, այսինքն՝ 1260—1261, ապա Սարգիսը՝ 24 տարի, որ կլինի 1285 թ., երբ «միապետեալ գերկոսին աթոռսն (նստի) Ստեփաննոս (Օրբելյան) ...»:

Հետադարձ հայացք ձգելով շարադրվածի վրա, Սարգիս Ա-ի գործունեության վերաբերյալ կարող ենք ասել, որ հանդես գալով քաղաքական ու ներկեղեցական ակաբախությունների մի ժամանակահատվածում, նա առանձնակի ձեռներեցություն չի ցուցաբերել: Փոխանակ աշխատելու վերացնել իր գլխավորած Աթոռի ներքին պառակտումը, նա բավարարվում է միայն Նորավանքը որպես առանձին վիճակ վավերացնելով, այսպիսով առավել ևս խորացնելով ստեղծված բաժանումը, որը հետագայում, հատկապես Ստեփաննոս Օրբելյանի օրոք, բավականին հուզումների տեղիք է տալիս: Մյուս կողմից, երբ բնաջնջվում էր ժողովուրդը և երկիրն ավերվում խորեզմցիների ու մոնղոլների արշավանքներից, Սարգիս Ա-ը տարիներով քաշվում է Մլեճո վանք, անտեղյակ իր հոտի իրավիճակից, այնտեղից էլ ուխտագնացություն կատարում Երուսաղեմ: Սակայն, մյուս կողմից, իր աթոռակալման առաջին տարիներին նա շինարարական լայն աշխատանք է ծավալում Ամաղու Նորավանքում և բավական ծաղկուն վիճակի է հասցնում այն, որը հետագայում դառնում է Վայոց ձորի կրթական օջախներից մեկն ու Սյունյաց ընդհանուր մետրոպոլիտության աթոռանիստը:

(Ծարունակելի)

<sup>76</sup> Ստ. Օրբելյան, էջ 364:

<sup>77</sup> «Սյունիքի պատմություն», էջ 8:

<sup>78</sup> Ա. Բարխուդարյան, «Դիվան», հոտ. Գ, էջ 280: